

## ՎԱՐԳԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ ԳՐԻՄՈՒՄ

### Յալթայի թատրոնի նորահայտ էսքիզները\*

Վարդգես Սուրենյանցը Գրիմը գիտեր մանկությունից, որովհետև առաջին անգամ այնտեղ հաստատվել է 1860-ականների երկրորդ կեսին, երբ նրա հայրը նշանակում էր ստացել Միմֆերոպոլում: Սուրենյանցները հաճախ էին ճանապարհորդություններ կատարում Գրիմի տեսարժան վայրերում, իսկ երբեմն այցելում էին Թեոդոսիա, որտեղ՝ Խալիբյան վարժարանում, ուսանում էր ընտանիքի ավագ որդին՝ Սուրեն Սուրենյանցը:

Որպես արվեստասեր ընտանիք, Թեոդոսիայում նրանք ջերմ ընդունելության են արժանացել աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու կողմից և 1867 թվականին նրա հետ միասին մեկնել Բախչիսարայ: Նկարչի իր առաջին քայլերն սկսելով Բախչիսարայի շատրվանի պատկերով, մանկահասակ Վարդգեսը խիստ ոգևորվել է Այվազովսկու հայրական գովեստից:

Սուրենյանցի համար դարձյալ Գրիմում գտնվելու առիթ է ստեղծվում 1897 թվականին, երբ Մոսկվայի «Կներել և Գրոսման» հրատարակչությունը Ա. Պուշկինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ (1899 թ.) նրան պատվիրում է ռուս մեծ բանաստեղծի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի ձևավորումն ու նկարագարողունքը: Այս շրջանում որոշ ժամանակով Սուրենյանցը նորից է այցելում Թեոդոսիա՝ կյանքի վերջին տարիներն ապրող Հովհաննես Այվազովսկու մոտ: Եվ Ա. Պուշկինի պոեմի նկարագարողունքն պատիվը նրա ճակատագիրը նորից է կապում նույն՝ Բախչիսարայի շատրվանի հետ և այն էլ՝ Այվազովսկու բարեկամական միջավայրում:

1897-ին Սուրենյանցը Բախչիսարայում<sup>1</sup> նյութեր է հավաքում, ուսումնասիրում է դրիմի թաթարների կյանքը, ընտրում համապատասխան տիպեր, տարագներ, առարկաներ, ճեպանկարներ անում: Արդյունքում՝ Գրիմում ու Մոսկվայում Սուրենյանցը ստեղծում է Ա. Պուշկինի պոեմի՝ մինչ օրս չգերազանցված պատկերագրողունքը, որը լույս տեսավ ռուս մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առիթով: Ռուսական ու հայկական գեղարվեստական շրջանակներում իրեն մեծ հռչակ բերած այս նկարագրողունքը նա ձոնում է իր առաջին ուսուցչի՝ Հովհաննես Այվազովսկու հիշատակին:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 12. 03. 2011:

<sup>1</sup> Տե՛ս Ծատուրյան Ա., Նամակներ Մոսկվայից: Պուշկինի տօնը գրականութան մեջ, «Մշակ», Թիֆլիս, 1899, 18 մայիսի, N 88, էջ 1-2:

Յաթթայի հետ են կապված նաև Սուրենյանցի կյանքի հետագա տարիները: Գեռնա 1906 թվականին նա ստացել էր Յաթթայի Սուրբ Հռիփսիմե հայկական եկեղեցին նկարագարողնու պատվերը (ճարտարապետ՝ Գ. Տեր – Միքելյան): Ավելի քան տասը տարի նկարիչն աշխատում էր եկեղեցու որմնանկարների էսքիզների վրա, իսկ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ճարտարապետական աշխատանքներն ավարտվել էին, Սուրենյանցը մեկնում է Յաթթա՝ դեռևս Պետերբուրգում սկսած իր էսքիզները տեղում ավարտելու համար: Երեք տարվա ընթացքում նկարագարողում է եկեղեցու պատերը, գմբեթը, ստեղծում է գիպսե բարձրաքանդակներ, որոնցից, սակայն, մնացել են միայն գմբեթի նկարագարումները (այս էսքիզների որոշ մասը պահպանվում է Հայաստանի Ազգային պատկերասրահում):

Յաթթայի հայկական եկեղեցու որմնանկարների զարդանկարներում ի մի է բերված այս բնագավառում Սուրենյանցի կողմից կատարված մեծ աշխատանքը: Ավարտելով որմնանկարները՝ նկարիչը վատառողջության պատճառով որոշ ժամանակ մնում է Յաթթայում, որտեղ նրան նյութապես օժանդակում է «Արվեստի և հնագույն հուշարձանների պահպանման կոմիտեն»<sup>2</sup>, ինչպես նաև նրա արվեստի բազմաթիվ երկրպագուները:



**Վ. Սուրենյանցը, Ա. Սպենդիարյանը, Ա. Ճատուրյանը և Ս. Բաբիյանը Գրիմում՝ 1909-1910 թթ.**

Վ. Սուրենյանցի ստեղծագործական կյանքի հաջորդ տարիները ևս կապված են Գրիմի հետ: Այս շրջանում Յաթթայում նրա ծավալված բուռն գործունեության մասին մի քանի կցկտուր վկայություններ են արձանագրված նկարչի ընկերոջ՝ դրինահայ բանաստեղծ Միմեոն Բաբիյանի ձեռագրերում:

Վ. Սուրենյանցի ստեղծագործական գործունեության այս ամենավերջին

<sup>2</sup> Տե՛ս Գ.Сошин, Наш город помнит Вардгеса Суренянца, «Комсомолец», Е., 1971, 26 мая, N 57, (4023), с. 3

շրջանի առարկայական արտահայտություններն են դարձել Յալթայի թատրոնի համար նրա ստեղծած արժեքավոր թատերական էսքիզները, որոնք վերջերս մեզ հաջողվեց հայտնաբերել Մոսկվայի Բախրուշինի անվան պետական թատերական քանդարանում:<sup>3</sup> Էսքիզներն ամենայն հավանականությամբ արվել են Յալթայի Ա.Չեխովի<sup>4</sup> անվան դրամատիկական թատրոնի համար: Ժամանակին այստեղ Չեխովի «Շայ» և «Քեռի Վանյա» երկերի բեմականացումներով հանդես է եկել նաև Մոսկվայի հռչակավոր Գեղարվեստական թատրոնը (ՄԽՄՏ-ը)<sup>5</sup> ռուսական մշակույթի հսկաներ, ակնավոր թատերագետներ Կ. Ստանիսլավսկու և Վ. Նեմիրովիչ-Ռանչենկոյի<sup>5</sup> գլխավորությամբ:



**Վ. Սուրենյանց, Յալթայի թատրոնի գլխավոր մուտքի էսքիզ, 1921թ.**

Յալթայի թատրոնի համար Վ.Սուրենյանցի ստեղծած նորահայտ թատերական էսքիզներից երկուսը նվիրված են Ա. Պուշկինի «Մոցարտ և Սալիերի» ու «Ժլատ ասպետը» պիեսներին (երկուսն էլ ստորագրված են 1921 թ., Յալթա), իսկ

3 Դա տեղի ունեցավ 2010 թ. նոյեմբերի 17-ին Մոսկվայի Բախրուշինի անվան թատերական քանդարանում աշխատելու ժամանակ:

4 Ռուս մեծ գրող Անտոն Չեխովի հետ Սուրենյանցը ծանոթացել է ամենայն հավանականությամբ՝ դեռևս 1890-ականներին, երբ նկարագարվում էր Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմը: Նկարիչը, լինելով Բախչիսարայում, այցելել է նաև իր լավագույն բարեկամին՝ երգահան Ա.Սպենդիարյանին ու, թերևս, վերջինիս հետ միասին եղել է Ա. Չեխովի տանը: Ռուս մեծ գրողն ու դրամատուրգը, որը հետագա տարիներին մինչև 1904 թվականը, Մոսկվայում էր, Կ.Ստանիսլավսկու վկայությամբ՝ անդրդիատ լինում էր Գեղարվեստական թատրոնում և հատկապես հետաքրքրվում էր Մ. Մետերլինկի պիեսներով: Անկասկած, այդ օրերին ևս Ա. Չեխովը հնարավորություն է ունեցել անձամբ շփվելու Վ.Սուրենյանցի հետ: 5 Թատերական - դեկորատիվ արվեստի բնագավառում Սուրենյանցի համբավն այնքան մեծ էր, որ նշանավոր շատ արվեստագետներ են փորձել նրան ներգրավել թատերական ձևավորման աշխատանքներում: 1900 թ. Պետերբուրգի Մարիյնյան թատրոնը Սուրենյանցին հրավիրում է ձևավորելու Ադոլֆ Շարլ Ադամի «Օմպահենը» բալետը: Մեկ տարի հետո նույն թատրոնում նա ստեղծում է Ա. Ռուբինշտեյնի «Դևի», իսկ հետո նաև Ռ.Վագների «Ջիգֆրիդի» ձևավորումները: Այս հաջողված աշխատանքները, ինչպես նաև նկարչի բարի համբավը նրա առջև բացում են Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի դռները, որտեղ 1904 թ. Սուրենյանցը ձևավորում է Մ. Մետերլինկի «Կույրերը», «Անկոչը», «Այնտեղ, ներսում» փոքրիկ պիեսները, Պ.Յարցևի «Վանքի մոտ» դրաման և Ա.Չեխովի «Շայը» ( Ն.Կոլոդյակի հետ միասին՝ 1905 թվականին ):

երրորդը պատկերում է թատրոնի գլխավոր մուտքը (1921 թ., Յաթա)։ Վերջինս ցույց է տալիս, որ Սուրենյանցը քաջ ծանոթ էր հայկական ճարտարապետության ու գրչագրերի մանրանկարներին, XVII - XVIII դդ. Նաղաշ և Հովնաթան Հովնաթանյանների կողմից կատարված Էջմիածնի եկեղեցու նկարազարդումներին։ Սուրենյանցի ընտրած հիմնական մոտիվը միջնադարյան ձեռագրերից վերցված բուսական զարդանկարն է։ Արևելյան բազմազույն ծաղիկները օրգանապես միահյուսվում են սիրամարգերի կտրացված ձևերին, որոնք ըստ ոճի միանգամայն հայկական են։ Վերջիններիս և՛ պատկերները, և՛ կապույտի, կանաչի ու սուկեգույնի բազմերանգ ելևէջներն ու համադրությունները (որոնք առկա են նաև Յաթայի եկեղեցու նկարազարդումներում) ստեղծում են յուրօրինակ գունային ներդաշնակություն։

Ա.Պուշկինի «Ժլատ ասպետը» դրամատիկ ստեղծագործության համար Սուրենյանցի ստեղծած թատերական էսքիզն ունի եռամաս հորինվածք։ Նկարիչը ասես գոթական ոճի նետածն կամարներից յուրաքանչյուրում ներկայացրել է գրական երկի բովանդակությունը։



**Վ.Սուրենյանց, «Ժլատ ասպետը», թատերական ձևավորման էսքիզ, Յաթա-յի թատրոն, 1921թ.**

Կամարներից առաջինում՝ աշտարակում պատկերված է երիտասարդ ասպետ Ալբերի սաղավարտը, որը վնասվել էր Դելորժի հետ մենամարտի ժամանակ։ Երկրորդում ներկայացված է Բարոնի՝ նկուղում պահվող ոսկով լի գանձանակներից մեկը, որոնց առջև նա վառված մոմեր էր դրել՝ հիանալով դրանց փայլով և իրեն զգալով հզոր տերության տիրակալ։ Երրորդ կամարի տակ՝ պալատում, նկարիչը պատկերել է, ամենայն հավանականությամբ, Դուքսի, Բարոնի և վերջինիս որդու հանդիպման վայրը։ Ա. Պուշկինի ռոմանտիկ ողբերգությունը պահանջում էր նաև միջնադարյան մթնոլորտի առկայությունը, որն այստեղ ներկայացված է գոթական նետածն կամարներով և դրանց վերևում տեղադրված ֆրանսիական միապետության խորհրդանիշը հանդիսացող՝ ոճավորված շուշան ծաղիկներով (fleur de lis)։

Հայտնի է, որ Ա. Պուշկինի այս պիեսը Ալեքսանդրյան թատրոնում<sup>6</sup> բեմադրության էր պատրաստվել դեռևս 1837 թվականին, բայց բանաստեղծի մահվան պատճառով ներկայացումը հետաձգվել էր: Ինչ վերաբերում է «Մոցարտ և Սալիերի» պիեսին, ապա այն բեմադրվել է դեռևս Ա. Պուշկինի կենդանության օրոք՝ 1832 թվականին<sup>7</sup>: Վ. Մուրենյանցը, ոգեշնչվելով Ա. Պուշկինի ստեղծագործությամբ, «Մոցարտ և Սալիերի» թատերական էսքիզում ևս հարազատ է մնացել մեծ բանաստեղծի ոճին, պատկերավոր կերպով մեկնաբանել երկի ճշմարտացի միջավայրը, պուշկինյան սեղմ ու լակոնիկ բնութագրումներն ու նկարագրությունները:



**Վ. Մուրենյանց, «Մոցարտ և Սալիերի», թատերական ձևավորման էսքիզ, 1921, Յալթայի թատրոն**

Մուրենյանցի նորահայտ թատերական ձևավորումները մեծ նկարչի բազմաբեղուն ստեղծագործական կյանքի վերջին էջերն են: Նրա կապը ռուսական մշակույթի լավագույն ներկայացուցիչների հետ իմաստավորվում է մշակութային ընդհանուր համայնապատկերի խորքի վրա: Մուրենյանցը անուրանալի վաստակ ունի ռուսական մշակույթում, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է թատերական-դեկորատիվ արվեստին: Վարդգես Մուրենյանցի բարեկամական կապերն ու սերտ համագործակցությունը ռուսական արվեստի և գրականության մեծագույն դեմքերի հետ ոչ միայն նրա անձի ու արվեստի բարձր զնահատականներն էին, այլև հայ և ռուս մշակույթների փոխհարստացման ու փոխներթափանցման արգասավոր օրինակները՝ Յալթայում հայ նկարչի ունեցած նշանակալից ներդրումների տեսքով:

Summery

## VARDGES SOURENYANTS IN THE CRIMEA

The Newly Discovered Sketches of the Theatre of Yalta

Shushanik G. Zohrabyan

<sup>6</sup> <http://1dnevnik.ru/library/author.php?id=13>

<sup>7</sup> <http://pushkin.niv.ru/pushkin/text/mocart-i-saleri.htm>